ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 9, 1954 Общественные науки

ԳՐԱԽԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակությամբ ոուսերեն լեզվով լույս է տեսել Հ. Մ. Էլչիբեկյանի գիրքը՝ նվիրված Սովետական իշխանության հաստատման համար 1917–1920 թթ. Հայաստանի աշխատավորների մղած պայքարի պատմությանը։

Գիրքը գրված է արխիվային փաստաթղթերի, պարբերական մամուլի, բազմաթիվ այլ աղբյուրների ու տվյալների հիման վրա, հեղինակի համար մեթոդոլոգիական ելակետ և ուղեցույց են հանդիսացել ինչպես տվյալ ժամանակաշրջանին, այնպես էլ գրքում քննության տրված կոնկրետ հարցերին վերաբերող մարքսիզմի-լենինիզմի կլասիկների համապատասխան աշխատությունները ու գրությունները, պարտիական վերագաս մարմինների դիրեկտիվները ու որոշումները։

Դիտարկվող աշխատությունը ընդգրկում է համեմատաբար կարճ պատմական ժամանակաշրջան, մոտ չորս տարվա պատմություն, սակայն այդ ժամանակաշրջանը էապես տարբերվում է պատմության անցյալ էտապներից թե իր սոցիալ-դասակարգային և թե պատմա-բաղաքական բովանդակությամբ, ինչպես և ներքին ու արտաքին բարդ իրադարձություններով։ Այդ ժամանակաշրջանի պատմությունը նշանավորվում է Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակով Ռուսաստանում։

Հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ 1917–1920 թթ. ժամանակաշրջանը մեծապես նշանակալի է նրանով, որ Հայաստանի բանվորները ու գյուղացիները, ոգեշնչվելով Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակով ու նրա ազատագրական գաղափարներով, Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի Հայաստանի կազմակերպությունների ղեկավարությամբ, իրենց սուր եղբայրների օրինակով պայքարում էին քաղաքական ազատության ու բարեկեցիկ ապագայի համար, երկրում Սովետական իշխանություն հաստատելու միջոցով դարեր առաջ կորցրած հայ ժողովրդի պետականությունը ձեռք բերելու և ազգային ազատ բարգավաճման պայմաններ նվաճելու համար։

Հ. Էլչիբեկյանի գիրքը, հակիրճ կերպով, ընթերցողին ծանոթացնում է այն պայքարի պատմության հետ, որ մղվել է Հայաստանում փետրվարյան բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայից մինչև 1920 թվականի վերջերը ունևոր դասակարգերի և օտարերկրյա իմպերիալիստական գաղութարարների դեմ, նրանց կամակատար և ստոր գործակալ, հայ ժողովրդի ոխերիմ թշնամի դաշնակների արյունոտ տիրապետությունը տապալելու և Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակը Հայաստանում իրականացնելու համար։

Հեղինակը թե մեթոդոլոգիական և թե պատմա-բաղաքական տեսակետից սկզբունքորեն միանգամայն ճիշտ է վարվել, երբ Հայաստանի 1917–1920 թթ. պատմությունը քննել է Ռուսաստանի, այդ թվում և Անդրկովկասի պատմության ֆոնի վրա, Հայաստանի բանվորների և գյուղացիների ռևոլյուցիոն պայքարը դիտելով որպես Ռուսաստանի ու Անդրկովկասի աշխատավորների ընդհանուր պայքարի մի մասը և նրա հետ սերտորեն շաղկապված։ Այդ օգնել է հեղինակին բարդ իրադրության պայմաններում ճիշտ դնահատության ենթարկել ռևոլյուցիոն և կոնտրռևոլյուցիոն ուժերի միջև Հայաստանում տեղի ունեցող սուր պայքարը և հիմնականում հանդել ճիշտ հետևություններին։ Այս պետք է համարել գրքի ամենակարևոր արժանիքը։

Հեղինակը առանձին ենթագլուխ է նվիրել 1917 թ. փետրվարյան ռևոլյուցիայից հետո մինչև Հոկտեմբերյան ռևոլյուցիան ընկած ժամանակաշրջանում, ամբողջ երկրում, այդ թվում Անդրկովկասում ու Հայաստանում գոյություն ունեցող իրադրությանը։ Գրքում

---

* *А. М. Эльчибекян*, Установление советской власти в Армении, Академия наук Армянской ССР, Институт истории. Изд. АН, Под редакцией Е. Саркисова, 1954, стр. 134.

ընդգծված է, որ փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունն որևէ նկատելի փոփոխություն չմտցրեց ամբողջ երկրի, այդ թվում և Հայաստանի աշխատավորական մասսաների դրության մեջ, նրանց հուզող ոչ մի հարց չլուծեց։ Ժամանակավոր կառավարությունը և նրա տեղական օրգանները մենշևիկների, Լեռների և բուրժուա-նացիոնալիստական պարտիաների աջակցությամբ շարունակում էին իրականացնել ցարիզմի բաղաքականություն պատերազմի, բանվորական, ագրարային և ազգային հարցերում։ Բոլշևիկների պարտիան պահանջում էր ոչ մի վստահություն չտածել դեպի ժամանակավոր կառավարությունը, ամբողջ իշխանություն հանձնել սովետներին և պայքարում էր հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու համար։

Գրքում բերված են անհրաժեշտ փաստեր, որոնք ընթերցողին լրիվ պատկերացում են տալիս 1917 թ. գարնան և ամռան ամիսներին ու հետագայում ամբողջ երկրամասում ծավալված բանվորական շարժման, գյուղացիական ելույթների մասին, աշխատավորների մեջ բոլշևիկների կատարած աշխատանքների մասին։ Ընթերցողը համառոտակիորեն ծանոթանում է այն պայքարի հետ, որ մղվում էր Անդրկովկասում, պարտիայի ապրիլյան կոնֆերենցիայի և 6-րդ համագումարի լենինյան դիրեկտիվների կենսագործման համար։

Հայաստանում կատարված մասսայական-քաղաքական աշխատանքի շնորհիվ աճում ու ամրանում են Ալավերդու, Լոռու, Ալեքսանդրապոլի և բոլշևիկյան մյուս կազմակերպությունները, որոնց շուրջ սկսում են էլ ավելի համախմբվել աշխատավորները։

Ցարական գեներալ Կորնիլովի կոնտրռևոլյուցիոն ելույթի ջախջախումից հետո ամբողջ երկրում և Անդրկովկասում աշխատավորական լայն խավերի մեջ էլ ավելի է բարձրանում բոլշևիկյան պարտիայի հեղինակությունը։ Բանվորները, զինվորները և աշխատավոր գյուղացիները սկսում են հեռանալ համաձայնողական պարտիաներից և համախմբվել բոլշևիկյան դրոշի տակ։ Այդ ընդհանուր իրադրության պայմաններում 1917 թվականի հոկտեմբերին Թիֆլիսում գումարվում է Կովկասյան բոլշևիկների առաջին համագումարը, որի աշխատանքները ղեկավարում էր Ստ. Շահումյանը։ Համագումարի աշխատանքները ընթանում են ՌԿ(բ)Պ 6-րդ համագումարի դիրեկտիվների կենսագործման նշանաբանով։ Համագումարից հետո Անդրկովկասի և Հայաստանի բոլշևիկները, կենսագործելով պարտիայի 6-րդ համագումարի որոշումները, նախապատրաստվում են սոցիալիստական հեղափոխությանը։

Հոկտեմբերյան հեղափոխությունը, հաղթանակելով Ռուսաստանի կենտրոնում, արագորեն ծավալվում է երկրի ծայրամասերում։ Նա խիստ կերպով փոխում է դրությունը նաև Անդրկովկասում։ Անդրկովկասի և Հայաստանի աշխատավորները պրոլետարական հեղափոխության հաղթանակի լուրը դիմավորում են մեծագույն խանդավառությամբ և պայքարում են նրա հաղթանակը Անդրկովկասում ևս ապահովելու համար։ Հեղինակը հանգամանորեն խոսում է հոկտեմբերից հետո ստեղծված իրադրության մասին, վկայակոչելով բազմաթիվ փաստեր՝ մերկացնում է ունևոր դասակարգերի, կոնտրռևոլյուցիոն պարտիաների, ցարական գեներալների և Անտանտայի իմպերիալիստների միասնական ջանքերը, որոնց նպատակն էր կանխել հյուսիսից եկող հեղափոխության ծավալումն Անդրկովկասում։ Այդ հակասովետական բլոկը 1917 թ. նոյեմբերի 15 (28)-ին կազմակերպում է, այսպես կոչված, Անդրկովկասյան Կոմիսարիատ, իսկ 1918 թ. փետրվարի 10 (23)-ին՝ Սեյմ ու դիմված պայքար սկսում Սովետական Ռուսաստանի դեմ, դաժանորեն հետապնդելով Անդրկովկասի հեղափոխությունը բանվորներին, գյուղացիներին և զինվորներին։ Սակայն ոչ հայածանքը և ոչ էլ տեռորը չեն կարողանում կասեցնել բանվորների և գյուղացիների պայքարը՝ Սովետական իշխանության հաստատման համար։

Գրքում հիշատակված են մի շարք կարևոր փաստեր, որոնք պատկերում են բանվորների, զինվորների և գյուղացիների պայքարը ընդդեմ հակասովետական կոալիցիայի և ցույց են տալիս, որ աշխատավորները չէին ցանկանում ճանաչել ինքնակոչ Կոմիսարիատի և ապա Սեյմի իշխանությունը, պահանջում էին ճանաչել Ժողկոմսովետի իշխանությունը Լենինի գլխավորությամբ։

Հեղինակը կանգ առնելով ազգային հարցի վրա, ցույց է տալիս, որ փետրվարյան հեղափոխությունը չլուծեց Ռուսաստանի ժողովուրդներին, այդ թվում և հայ ժողովրդին մշտապես զբաղեցնող ազգային հարցը, որ մարդկության պատմության մեջ առաջին անգամ ազգային հարցը վերջնականապես լուծեց և ժողովուրդների իսկական ազատագրումը գործնականորեն իրականացրեց սոցիալիստական հեղափոխությունը։ Գրքում բերված են Սովե-

տական պետության ազգային քաղաքականությունը վերաբերող առաջին պատմական երկու փաստաթղթերը՝ Ռուսաստանի ժողովուրդների իրավունքի դեկլարացիան և Ժողկոմսովետի դեկրետը՝ Արևմտյան Հայաստանի մասին։ «Հայ ժողովուրդը,—գրում է հեղինակը,—հսկայական զոհունակությամբ է դիմավորում այդ դեկրետը, որը իրական պայմաններ է ստեղծում արևմտահայերին թյուրքական դարավոր կեղեքումից փրկելու» (էջ 35)։ Այդ դեկրետի իրագործմանը խանգարում է մի կողմից գերմանա-թյուրքական իմպերիալիստների ավազակային հարձակումը երիտասարդ Սովետական Ռուսաստանի վրա, իսկ մյուս կողմից՝ Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոներների՝ մենշևիկների, դաշնակների, մուսավաթիստների և այլոց դավաճանությունը։

Ազգությունների ժողովրդական կոմիսարիատը ի դեմս նրա սիստեմում կազմակերպված Հայկական Ազգային Գործերի Կոմիսարիատի՝ Լենինի և Ստալինի ղեկավարությամբ խոշոր աշխատանք է կատարում հայ ժողովրդի շահերը պաշտպանելու, իրենց հայրենի վայրերից բշված, ապրուստի միջոցներից զրկված և Ռուսաստանի դանդաղ վայրերում ապաստանած հարյուր հազարավոր հայերի գոյությունը պահպանելու և հայ աշխատավորներին Սովետական իշխանության շուրջը համախմբելու ուղղությամբ։ Սովետական պետությունը հսկայական միջոցներ է տրամադրում՝ հայերեն լեզվով թերթերի և գրականության հրատարակման, ուսումնական հաստատություններ և մանկատներ բացանելու, գաղթականներին նյութական օգնություն ցույց տալու նպատակներին։

Անդրկովկասում սովետական կարգերի հաղթանակից սարսափած և այն կանխելու նպատակով, երկրամասի հակասովետական կոալիցիան դիմում է արյունռուշտ ինտերվենտների օգնությանը։ Աշխատավորների կամքին հակառակ նա Անդրկովկասը հանձնում է նախ գերմանա-թյուրքական զավթիչների, ապա անգլո-ֆրանսո-ամերիկյան դաղութարարների հոշոտմանը։

Գրքում դպրի տեղ է հատկացված դաշնակների համաձայնությամբ թյուրքական զավթիչների կողմից Հայաստանի օկուպացմանը և դրա հետևանքով հայ ժողովրդի համար ստեղծված ծանր դրությանը։

Սակայն հեղինակը անհրաժեշտ խորությամբ ցույց չի տվել այն չափազանց կարևոր պատմական նշանակություն ունեցող պայքարը, որ հակառակ դաշնակների կամքի ու ցանկության, նրանց և թյուրքերի միջև ծաթումում կնքված համաձայնության, ժողովրդական լայն մասսաները մղում էին իրենց ապատությունը պաշտպանելու համար։

Հայտնի է, որ 1918 թ. ապրիլ—մայիս ամիսներին թյուրքերը անցնում են հարձակման, թափանցում են Անդրկովկաս, որի հետևանքով հայ ժողովրդի համար բացառիկ ծանր դրություն է ստեղծվում։ Պատմական փաստ է, որ դաշնակները լքում են ռազմաճակատը, արդելակում թյուրքական արշավին դիմադրելու գործը։ Նրանց՝ այսպես կոչված ազգային գնդերը, առանց դիմադրելու արագ նահանջում են՝ մեկը մյուսի հետևից թշնամուն հանձնելով Կարսը, Սարիղամիշը, Արդահանը, Սուրմալուն, Ալեքսանդրապոլը և այլն։

Հայ ժողովրդի բոլոր դժբախտությունների պատճառ հանդիսացող դաշնակների այդ ստոր քաղաքականության հակառակ՝ ժողովուրդը հերոսական դիմադրություն է ցույց տալիս թյուրք ենիչերիներին։ Երևանի և Էջմիածնի զավառների բնակչությունը Սարդարապատի դաշտում պարտության է մատնում Երևանի վրա հարձակվող թյուրքական զորքերին։ Իսկ Ղազախ—Ղիլիջան—Փամբակի շրջանների գյուղացիները երեք օր կասեցնում են թյուրքական կանոնավոր և գերակշռող զորքերի արշավանքը և պպալի կորուստ պատճառում նրանց։

Հայաստանի աշխատավորների հերոսական ազատագրական պայքարի այդ փառավոր էջերը գրքում տեղ չեն գտել և հեղինակի կողմից պատշաճ գնահատության չեն արժանացել։

Փաստերով հանդամանորեն մերկացված է դաշնակների ու նրանց մարիոնետային կառավորության հակաժողովրդական և հակասովետական ներքին ու արտաքին քաղաքականությունը։ Անդրկովկասի մյուս բուրժուա-նացիոնալիստական պարտիաների հետ միասին, դաշնակները Հայաստանը դարձրել էին իմպերիալիստների գաղութ՝ նրանց ռազմաստրատեգիական հենակետը Սովետական Ռուսաստանի դեմ պայքարելու համար։ Սովետական Ռուսաստանի բանվորների և գյուղացիների դեմ մղվող պայքարում դաշնակները ակտիվ կերպով համագործակցում էին ինտերվենտների և սպիտակգվարդիական գեներալների հետ, օգնում էին նրանց այն ամենով, ինչով որ կարող էին։

Հեղինակը հարուստ փաստերով և տվյալներով պատկերել է Հայաստանի ներքին դրությունը 1918—1920 թվականներին։ Հայ ժողովրդի պատմության մեջ դաշնակների տիրապետության ժամանակաշրջանը եղել է մռայլ ու կոշմարային. ժողովրդական տնտեսության ընդհանուր փլուզումը չտեսնված չափերի էր հասել, սովն ու համաճարակը ամեն օր հազարավոր կյանքեր էին տանում գերեզման։ Հայաստանում թագավորում էր աղքատությունը, կեղեքումը, անարխիան, թալանն ու տեռորը։ «Դաշնակները և նրանց ամերիկա-անգլիական տերերը Հայաստանը դարձրել էին ավերակների կույտ և ժողովրդին կանգնեցրել էին անդունդի եզրին» (էջ 71)։

Ժողովուրդների դահիճ ամերիկա-անգլիական իմպերիալիստների և նրանց գործակալ դաշնակների տիրապետությունը ժողովրդական լայն խավերի մեջ խոր ատելություն էր առաջացրել։ Հայաստանի բանվորների և գյուղացիների պայքարը տիրող ռեժիմը տապալելու, գաղութարարներին երկրից վոնդելու և սովետական կարգերի հաղթանակը ապահովելու համար՝ երբեք չի դադարում, և առավել կազմակերպված բնույթ ու լայն ծավալ է ստանում 1919 թվականի կեսերից։

1918—1920 թթ. Հայաստանում տեղի են ունենում բանվոր ծառայողները մի շարք գործադուլներ, գյուղացիական ելույթներ, ազգարային հուզումներ և զինված պայքար, որոնք ուղղված էին դաշնակների տիրապետության դեմ, երկրում տիրող հակաաշխատավորական ռեժիմի, անարդարությունների ու անարխիայի դեմ։ Գյուղացիական ելույթների և հուզումների հիմնական բովանդակությունը կազմում էր աշխատավորների կենսական կարիքների բավարարումը, հողի հարցը և ուղղված էր դաշնակների բուրժուա-կուլակային ազգարային քաղաքականության դեմ։ Այդ հուզումները հանդիսանում էին այն պայքարի շարունակությունը, որ Հայաստանի աշխատավոր գյուղացիությունը սկսել էր մղել Սովետական իշխանության և հողի համար Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայից հետ (էջ 73—70)։

Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի բանվորների և աշխատավոր գյուղացիների պայքարը՝ Սովետական իշխանության հաստատման համար ղեկավարում ու կազմակերպում էր Կոմունիստական մեծ պարտիան։ Պարտիայի Կենտրոնական Կոմիտեն Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ ղեկավարում էր ամբողջ երկրի կոմունիստական կազմակերպությունների գործունեությունը, մեծագույն օգնություն էր ցույց տալիս նախկին ցարական Ռուսաստանի ծայրամասերի ժողովուրդներին՝ նրանց սոցիալ-դասակարգային և քաղաքական ազատության համար, Սովետական իշխանության համար մղվող պայքարում։

Հ. Մ. Էլչիբեկյանը հակիրճ կերպով ցույց է տվել, որ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները ՀԿ(բ)Պ Երկրային Կոմիտեի ղեկավարությամբ աշխույժ քաղաքական-մասսայական աշխատանք են ծավալում աշխատավորների մեջ, ղեկավարում էին նրանց պայքարը դաշնակների տիրապետությունը տապալելու համար։ 1919 թ. կեսերից սկսած պարտիական կազմակերպությունները նոր լիցք և թափ են ստանում, աճում են պարտիական բջիջները, ավելանում է կոմունիստների քանակը։ Մանավանդ 1920 թ. հունվարին տեղի ունեցած կոնֆերենցիայից հետո։

1920 թ. գարնանը Հյուսիսային Կովկասի սպիտակգվարդիական ուժերի դեմ Կարմիր Բանակի տարած վճռական հաղթանակները և նրա մոտեցումը Անդրկովկասին, հսկայական նշանակություն են ունենում և նոր, ավելի մեծ թափ են հաղորդում Սովետական իշխանության հաստատման համար Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի աշխատավորների մղած պայքարին։

Ապրիլի վերջերին Ադրբեջանում Սովետական իշխանությունը հաստատումը ավելի է բարձրացնում Հայաստանի բանվորների և գյուղացիների մարտական ոգևորությունը, որի փայլուն արտահայտությունը հանդիսանում են մայիսյան դեպքերը։

Հեղինակը միանգամայն իրավացիորեն դդալի տեղ է հատկացրել 1920 թ. մայիս-մեկյան ցույցերին և մայիսյան զինված ապստամբությանը։

Մայիսմեկյան մարտական ցույցերը Ալեքսանդրապոլում, Երևանում, Կարսում, Սարիղամիշում, Վաղարշապատում և մյուս վայրերում անցնում են բոլշևիկյան դրոշների տակ և հաստատում են, որ Հայաստանի աշխատավորները պատրաստ էին Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ իրենց ուսերից թոթափելու ամերիկա-անգլիական իմպերիալիստների և նրանց գործակալ դաշնակների ծանր լուծը և երկրում հաստատելու Սովետական իշխանություն։ Մայիսմեկյան ցույցերը շուտով վերածվում են զինված ապստամբության, որի ազդանշանը տալիս են Ալեքսանդրապոլի բանվորները, զինվոր-

ները և մյուս աշխատավորները։ Ալեքսանդրապոլից հետո ապստամբում են Կարսը, Սարիղամիշը, Նոր Բայազետի, Դիլիջանի գավառները և մի շարք շրջաններ։ Ամենուրեք ապրստամբները հաղթանակում են, հաստատում են Սովետական իշխանություն։

Մայիսյան ապստամբությունը համաժողովրդական ապստամբություն էր՝ հանուն Սովետական իշխանության հաստատման Հայաստանում։

Հայաստանի աշխատավորների թշնամիներին հաջողվում է ճնշել ապստամբությունը շնորհիվ այն սխալների, որ թույլ են տալիս Արմենկոմը և Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն։ Ապստամբության այդ ղեկավար օրգաններն իրենց գործողություններում ցուցաբերում են անթույլատրելի անվճռականություն, դանդաղկոտություն և թշնամու նկատմամբ բարեհոգություն։ «Այդ սխալների հետևանքով, փոխանակ միաժամանակ և ընդհանուր դինված ապստամբության, ստացվեցին անջատ, մեկը մյուսի հետ չկապված դինված ելույթներ» (էջ 95)։

Չնայած ապստամբությունը պարտվեց, նրա ղեկավարներից շատերը՝ կոմունիստական պարտիայի անանկուն դինվորները ընկան այդ պայքարում, բանտերը լցվեցին հարյուրավոր կոմունիստներով ու ռևոլյուցիոն բանվորներով, գյուղացիներով և դինվորներով, բայց և այնպես պայքարը՝ հանուն Սովետական իշխանության ընդդեմ դաշնակների և նրանց ամերիկա-անգլիական տերերի, չդադարեց, այն շարունակվեց ընդհուպ մինչև Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում։

Մայիսյան հերոսական ապստամբությունը հանդիսացավ սովետական կարգերի հաստատման համար Հայաստանի բանվորների ու գյուղացիների մղած պայքարի փառապանծ էջերից մեկը (էջ 100)։

Մայիսյան ապստամբությունը հանդիսացավ քաղաքացիական պատերազմի դպրոց, որի դասերը հաշվի առնելով Հայաստանի բանվորները և գյուղացիները, կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, եռակի էներգիայով շարունակում էին պայքարել, երբեք չտարակուսելով իրենց վերջնական հաղթանակի մասին։

Իր աշխատության վերջին գլուխը հեղինակը նվիրել է Հայաստանում սովետական կարգերի հաստատման պատմությանը։ Հայ ժողովրդի անարդ թշնամի դաշնակները և նրանց տերերը՝ ամերիկա-անգլիական իմպերիալիստները արյան մեջ խեղդելով մայիսյան հերոսական ապստամբությունը, չէին կարող կասեցնել աշխատավորների ռևոլյուցիոն-պայքարը։ Քաղաքացիական կռիվները ընդդեմ դաշնակների շարունակվում էին Լաղաչ—Շամշադինի շրջանում և Զանգեզուրում, սուր ընույթ ընդունելով մանավանդ Զանգեզուրի գավառում։

Հեղինակը հանգամանորեն կանգ է առել դաշնակների և քեմալականների միջև տեղի ունեցած պատերազմի, հայ ժողովրդի համար այդ պատերազմի ունեցած ծանր հետևանքների վրա և ցույց է տվել, որ Անտանտայի պետությունները առաջին հերթին Անգլիան, հրահրելով այդ պատերազմը, նպատակ ունեին թնկուզ հայ ժողովրդի կործանման գնով թյուրքերին ընդդրկել հակասովետական ինտերվենցիայի մեջ։ Գրքում բերված են փաստեր, որոնք ցույց են տալիս, որ այդ կատաստրոֆիկ դրությունից դուրս գալու միակ ելքը դաշնակների տիրապետության տապալումն ու երկրում սովետական կարգերի հաստատումն էր։

Հայաստանի բանվորների և գյուղացիների պայքարը Սովետական իշխանության համար 1920 թվականի աշնանից ավելի է ուժեղանում, մտնելով նոր փուլի մեջ, որը և ավարտվեց նրանց պատմական հաղթանակով։

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի հյուսիսային շրջանների աշխատավորները Հայաստանի Կոմպարտիայի ղեկավարությամբ ապստամբում են և Սովետական Ռուսաստանի դինված ուժերի զորամասերի օգնությամբ վերջ են դնում դաշնակների արյունոտ դիկտատուրային և Հայաստանում հաստատում են սովետական կարգեր։ Այսպիսով, Սովետական իշխանության համար Հայաստանի բանվորների ու գյուղացիների մղած պայքարը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ և ռուս մեծ ժողովրդի օգնությամբ պսակվում է վերջնական հաղթանակով։

Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում հայ ժողովրդի պատմության մեջ շրջադարձային կետ հանդիսացավ։ Բազմաչարչար հայ ժողովուրդը փրկվեց ֆիզիկական բնաջնջումից, սոցիալական ու ազգային վերածննդի անսահման մեծ, մինչ այդ չտեսնված հնարավորություն ստացավ և վերականգնեց դարեր առաջ կորցրած իր պետականությունը։ Սովետական իշխանության շնորհիվ Հայաստանը դուրս եկավ տնտեսական

փյուզումից և Հայաստանի աշխատավորները բռնեցին տնտեսական ու կուլտուրական շինարարության զարգացման նոր ուղի։

Հ. Մ. Էլչիբեկյանի աշխատությունն ունենալով ակնառու առավելություններ և մեծ կարևորություն, զերծ չի նաև մի քանի թերություններից։ Նախ և առաջ հարկ է նշել, որ գիրքը ավելի կշահեր և է՛լ ավելի օգտավետ կլիներ, եթե հեղինակը որոշ հարցեր լուսաբաներ ավելի հանգամանորեն, խուսափեր սխեմատիզմից, որը նկատվում է գրքի մի շարք գլուխներում։

Միանգամայն ճշմարտացիորեն ցույց տալով, որ Կոմունիստական պարտիան միակ պարտիան էր, որ կանգ չառնելով ոչ մի դժվարության առաջ, համարձակ և հետևողականորեն իրականացնում էր իր ավանդարդային դերը, կազմակերպում ու գլխավորում էր Հայաստանի բանվորների և աշխատավոր գյուղացիների ռևոլյուցիոն պայքարը ընդդեմ ներքին ու արտաքին կիզեքիչների, ընդդեմ դաշնակների և նրանց հակաժողովրդական տիրապետության՝ հեղինակը, այնուամենայնիվ, իր աշխատության մեջ մոռացություն է տվել սկզբնական պարտիական կազմակերպությունների աշխատանքը, պատշաճ տեղ չի տվել այն կազմակերպչական, բաղաքական-մասսայական աշխատանքներին, որ կատարվում էին պարտիայի ստորին օղակների՝ բջիջների կողմից՝ Հայաստանի քաղաքներում, գավառներում և գյուղերում։ Մինչդեռ փաստ է, որ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները՝ բջիջները 1917—1920 թթ. աճեցին բանակապես, ամրացան կազմակերպորեն և բազմաթիվ վայրերում իրենցից լուրջ ուժ էին ներկայացնում։ Նրանք մեծ հեղինակությամբ էին օգտվում աշխատավորների մեջ ոչ միայն բանվորական վայրերում, այլև գյուղերում ու զինվորական մասերում։ Կոմունիստական կազմակերպությունների աշխատանքը Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Ղարաքիլիսայում, Երևանում, Նոր Բայազետում, Գիլիջանում, Զանգեզուրում և մի շարք այլ շրջաններում ու գյուղերում, ինչպես և զինվորների շրջանում, լայն ծավալ են ստանում 1919 թ. կեսերից, ավելի են խորանում նույն թվականի վերջերից և 1920 թ. սկզբներից։

Ակներև է, որ բանվորների և գյուղացիների պայքարի պատմությունը գրելիս, մանավանդ սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակից հետո ընկած ժամանակաշրջանում, չի կարելի հանգամանորեն չխոսել աշխատավոր դասակարգերի պայքարը կազմակերպող և ղեկավարող կազմակերպությունների՝ Կոմունիստական բջիջների մասին, ըստ ամենայնի, վեր հանելով և գնահատության ենթարկելով նրանց կատարած աշխատանքը։

Աշխատության մեջ որոշակիորեն իր արտացոլումը չի գտել մի այնպիսի կարևոր պրոբլեմ, ինչպիսին բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պրոբլեմն է, ցույց չի տրված Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների կատարած աշխատանքը և պայքարը այդ դաշինքի ամրապնդման ուղղությամբ։ Այս՝ աշխատության էական թերություններից մեկն է։

Գրքում թույլ են լուսաբանված կոմունիստական երիտասարդության շարժման հարցերը, երիտասարդությանը կոմունիստական դրոշի տակ համախմբելու ուղղությամբ «Սպարտակ»-ի կատարած աշխատանքը, նրա մասնակցությունը մայիսյան ապստամբության նախապատրաստման և իրականացման գործում։

Գրքի որոշ գլուխներում նկատվում է շոշափված հարցերի տրամաբանական կապի բացակայություն։ Զատից դուրս շատ են անտեղի ենթաբաժանումները, որոնց մի մասը տրամաբանորեն չի բխում նախորդից։ Հաճախ առանձին հարցերի մասին արձանագրվում է փաստը՝ առանց անհրաժեշտ հետևության, եզրակացության։

Չնայած հիշատակված թերություններին, Հ. Մ. Էլչիբեկյանի աշխատությունը կարևոր ներդրում է սովետահայ պատմագրության մեջ, որի նշանակությունը իրապես մեծ է մեր ժողովրդի նորագույն պատմության համար։ Գրախոսվող գիրքը ճշմարտացիորեն պատմում է այն հերոսական պայքարի մասին, որ Հայաստանի բանվորներն ու աշխատավոր գյուղացիները, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ մղել են Հայաստանում Սովետական իշխանության հաստատման համար։

Հ. ԿԱՐԱԳԵՈՍՅԱՆ